


ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար	համար
սարկիսի	12 ֆր.
վեցամսեայ	6 "
Արսասահմանի	
համար սարկիսի	15 "
վեցամսեայ	8 "
Ամերիկայի համար	
սարկիսի	3 ֆր.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցանել տողը ստա  
ջիկ երեսին համար 40 ս.  
իսկ վերջին երեսին հա-  
մար 20 սակրիսի է. երե-  
ֆեկն աւելի ակզաններու  
համար 20 0/0 զեղջ կըլ-  
լայ :

Վառնայի համար  
ձևի 40 սակրիսի



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔՈՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԵՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ  
Отговорникъ СТЕЛАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ դրկեզ  
խմբագրութեանս հաս-  
ցիկն

Редакция на вѣстникъ  
"Наржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charoum"  
(Bulgarie) Yarna

Պոչկարիոյ համար  
ձևի 15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար  
ձևի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չիս  
սրուիք

ՇԱՐՔՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՏՈՎ ՎՃԱՐԻ

Վ Ե Ր Ջ Ա Պ Է Մ . .

Հակամարդկային... Թո՛ղ հակա-  
մարդկային, բայց անկարող կըլլամ  
անասնման գոհունակութեան, ան-  
հուն հրճանքի հոտաչանք մը զսպել  
որը սրտի խորքէն կը բարձրանայ,  
կուրծքս կուռեցնէ, կը լայնցնէ, սեւ,  
մութ ու մոայ մղձաւանջի մը բովան-  
դակ ծանրութեամբ ճնշող բռնէ թե-  
թեցնելով զայն :

Վերջապէս... պիտի գոչեն ինձ  
նման այն խոշոր հայ շրթունքները,  
որոնք Բաքուի նահանգապետ իշխան  
Նակաչիճէի հայ յեղափոխականի կար-  
միր բռնարկի բեկորներուն հետ օղբ  
ցնդելու լուրը պիտի կոտտան առա-  
ջին հեռագիրներու կարճ տողերուն  
մէջ :

Վերջապէս... այո՛, այդ անխու-  
սափելի վերջապէսը եկաւ անգամ  
ալ եւ աւելի քան ուժեղ, կորովի  
կերպով ապացուցանել թէ հայու  
կեանքին հետ այլեւս կարելի չէ ան-  
պատիժ կերպով խաղալ, թէ անցան  
այն հին ու բարի ժամանակները,  
երբ հայը իր ողնաշարը կը ծոկը ա-  
մէն մի հարածի տակ, խաղալիք եւ  
զոհ կըլլար ամէն մի սեւ մեքենայու-  
թիւններու, (ինչպէս զժառանգաբար  
վերջին անգամ ալ եղաւ, վերջին կը  
սեմ, որովհետեւ ալ չեմ երեւակայեր  
որ այդորինակ մարդկային սպանդա-  
նոցներ կազմակերպուին կովկասի  
մէջ) առանց սակայն այդ կարուկ,  
կարճ ու արգար դատաւարութեան  
ու անողոք վճռին...

Հայը գուցէ դեռ ամբողջապէս յե-  
ղափոխական չէ, բայց թող միան  
գամ ընդ միշտ ըմբռնեն Նակաչի-  
ճէիները, թէ անոնք որոնք դեռ կը  
նան իր զոհերը դառնալ ոչխարաբար՝  
անոնք անողոք ու սարսափելի վրէժ-  
խնդիրներ ունին, որոնց անվրէպ  
գնդակէն ու որոտացող ուղմբէն ոչ  
կամ կանուխ ո՛չ մի Նակաչիճէ կրնայ  
խուսափել անպատիժ...

Հայը դեռ նոր կըսկսի հասկանալ  
թէ խաղաղ քաղաքակրթութեան շէն-  
քի կառուցումին աշխատող ձեռքերը  
նոյնքան վարժ պէտք է ըլլան հրա-  
ցան մը, ատրճանակ մը կամ սուր  
մը ճարտարօրէն գործածելու, ի հար-  
կին կարելի եղածին շարժող ու ճա-  
խելու համար կեանքը, ինչպէս Ա.  
Պա՛մեան մը կըցաւ ընել :

Եթէ հայերը Աղամեաններ եղած  
ըլլային, եւ եթէ հայու հանգարտ  
ու չինիչ գործունէութեան եւ յատ-  
կութիւններուն հետ մաքառողի,  
յանդուգն եւ անձնագոհ կուռղի եւ  
հարկ եղած պարագային յարձակողի

կորովը կասկածուէր, անշուշտ վեր-  
ջին ողբերգական տեսարանները ի-  
րենց արեւնոտ ու կարմիր պատկեր-  
ները չը պիտի պարզէին մեր անա-  
կեկալի սարսափէն տարօրինակէս  
բացուած աչքերուն առաջ...

Նոյն իսկ պիտի ըսեմ, թէ կովկա-  
սի նախկին կատաւարչապետ իշխան  
Կոլիցիւնի կեանքին դէմ կատարուած  
եւ վրժած փորձի ժամանակ նուազ  
ասպետաբար վարուած ըլլայինք. ա-  
պահովաբար Նակաչիճէիները յենա-  
կէտ մը, գուցէ եւ Ռուսաստանի  
խորքերը թագնուած չար խորհրդատու  
մը չը պիտի ունենային այդ սար-  
սափները ծնելու, երկու դրացի հա-  
սարակութիւններու մէջ անախորժ  
եւ տխուր դրութիւնը ստեղծելու  
համար, որը անշուշտ ոչինչ ունի  
մխիթարական :

Վերջին անանուն վայրագութիւն-  
ները, հայ կիներու պատառոտուած  
արգանդները, հայ մանկիկներու  
շախախտուած գանկերը, հայ նրի-  
տասարգներու աճխացած ոսկորները  
կը յօսամ թէ զգալի չափերով նուա  
զեցուցած պիտի ըլլան մեր անտեղի  
ասպետական ողին, այդ պակասը  
լեցնելով արդար զայրոյթի, վրէժի  
եւ ինքնապաշտպանութեան արու ըզ-  
գացումով մը :

Այն անհաւասար կուրն մէջ, որը  
կը մղէ հայը իր բազմաթիւ ու այ-  
լացեղ թշնամիներուն դէմ, այդ կըռ-  
ւին մէջ կըսեմ, սպանտական ողին  
չէ՛ որ թշնամիին բազուկը պիտի  
թուլացնէ, այլ հարուածին անմիջա-  
պէս հետեւող սարսափելի, անողորմ  
հակահարուածը, ինչպէս եղաւ վեր-  
ջերս շարք մը փայլուն տէքորներով,  
եւ որոնց պակը կրնայ համարուել  
Նակաչիճէի անխնայ սատակումը...

Անշուշտ հասկանալի է՝ եւ այս է-  
ջերուն մէջ վրէժի կոչը արձակած  
ժամանակ կրկնած եմ՝ թէ ազգաբը-  
նակութիւններու համբարչի կեանքը  
եւ գործունէութիւնը ամէն միջոց-  
ներով ապահովելու, նոյն իսկ փո-  
խադարձաբար զիջումներ ընելու տե-  
սակէտին կուսակից եմ :

Հայու վրէժառու ձեռքը իր ամ-  
բող ծանրութեամբ պէտք է իջնայ  
միայն եւ միշտ անոնց վրայ, որոնք  
մութիւն մէջէն վայրենի ու տգէտ  
ամբոխ մը կը զինեն, բարեկամական  
յարաբերութիւնները թունաւորելով  
իրենց զօրիւնային խորհուրդներով,  
բայց սեւ ծրագիրներու իրականաց-  
ման ժամանակ ալ զիտնալով անմո-  
ռանալի դաս մը տալ այդ կոյր գոր-  
ծիքներուն, դաս մը, որ յաւիտեան  
հրաժարեցնել տայ հայու կեանքին

եւ ինչքին դէմ՝ արտաքին ազդեցու-  
թեան մը տակ կամ ինքնուրոյն յը-  
ղացում՝ դաւադրութիւններ նիւ-  
թելէ :

Մարդասիրական եւ քաղաքակր-  
թական զգացումներէն աւելի, այսօր  
բանակներու, թնդանօթներու եւ  
նաւատորմիքներու ուժը, ծեծ ուտե-  
լու վախն է որ եւրոպական տէրու-  
թիւններուն կըստիպէ իրարու կեն-  
սական շտնելը, պատիւը եւ կեան-  
քը յարգել...

Արդէն XXրդ դարուն մէջ, բայց  
դեռ խաղաղ կուլտուրական ազգ մը  
առանց պատերազմիկ յատկութիւն-  
ներու՝ ոչխար ազգի մը հոմանիշ է...  
եւ որուն կը մորթեն անպատիժ :

Հրանճ

Թ. Գ. — Վերջին հեռագիրները ե-  
կան իրենց սեւ յրականութեամբ հաս-  
ատեւ իմ նախապէս ակնարկած  
անստուանալի դասին աւելի քան ըս-  
տապողական պահանջ մը զարմած ըլ-  
լալը, նախընտանի մէջ Բագուի  
սարսափները կրկնուած են արդէն  
աւելի մեծ չափերով...

Ի՞նչ բանի ծառայեցին ուրեմն այն  
բոլոր բարի ցանկութիւնները, հաշ-  
տարար խօսքերը եւ ցոյցերը...

Ի՞նչ կը կարծես ընթերցող, ան-  
մոռանալի դասը աւելի օգտակար չէ՞ր  
ըլլար քան մարդասիրական զգացում-  
ները, որոնցմով տողուրուած ենք,  
եւ որոնց սակայն կովկասի մեր հա-  
րեւանները իբր վախկոտութեան ա-  
պացոյց մը կընդունին...

Հ.

ՊԵՏԵՐՐՈՒԳԸ ԱՆՏԱՐԲԵՐ Է

(Ն. Յ. Պրեսնիցի ֆաղուած)

Չըկան աւելի խորտակիչ խօսքեր,  
քան այն որ հեռագիրը բերում է Պե-  
տերրուրդից. — Պետերրուրդը ան-  
տարբեր է : Ու այս տեղեկութիւնը  
կարելի է թէ ոչ պակաս սարսափե-  
ցուցիչ ու սպաննիչ է քան աւե-  
րուած ծովային մի պետութեան նրա  
ժողովակալների գերումը եւ վերջապէս  
խորին քաղաքական անկումը : Պե-  
տերրուրդը անտարբեր է : Ոչ, այն  
ժողովուրդը, որը զօրեղակալն չէ զըր-  
գովում իր երկրի անկման առջեւ,  
երբ նրա զժառիգ զաւակները ողջ  
ողջ զոհ են գնում անտակ ծովի ա-  
լիքներին, ժողովուրդը որը անտար-  
բերութեամբ դիմաւորում է բազմի  
ամենածանր հարուածներին, վատ չէ :

բարոյապէս փճացած չէ. ոչ, այլ նա  
լրջօրէն հիւանդ ժողովուրդ է :

Որովհետեւ այդ ժողովուրդը ներ-  
քին ոչ մի կապ ունի պետութեան  
հետ, նա ապրում է հոգեկան առան-  
ձին կեանքով, որը չէ նմանում իր  
տիրապետողների կեանքին, նա ինք-  
զինքը բոլորովին օտար է զգում սե-  
փական տան մէջ, երբէք բոնութեան  
սիտէմը այսպէս խիստ կերպով դա-  
տապարտված չէ եղել, երբէք նրա ար-  
համարելիութիւնը այսպիսի որոշ կեր-  
պով չէ նկատվել, Այն օրից՝ երբ Պե-  
տերրուրդի ձեռնոտ փողոցներում ըն-  
կան ոչ պակաս, քան նրանք որոնք  
փթուած են Ովկիանոսի անդունդներում,  
մահացածներ եւ վիրաւորներ, հոգե-  
կան կապը կարծեք հալածողների՝ եւ հա-  
լածվողների միջեւ, նա դադարեց գոյու-  
թիւն ունենալ, Ռուսական մի նոր  
յաղթութիւն ժողովրդի մէջ վախ  
պէտք է յարուցանէր եւ նրան հո-  
գեր պատճառէր թէ պիտի գայ մի  
նոր բռնաւոր Պէ՛լէ, աւելացնելու  
անբնակ վայրերի արտոբանդների քա-  
նակութիւնը, նագայկաներով ծեծե-  
լու կանանց եւ աւելի մեծ թուով  
անօգնական մարդկային էակներ նե-  
տելու շինքանների մէջ, կարելի է  
թէ այդ ժողովուրդը Ռուսիոյ պար-  
տութիւնը պատերազմում ընդդէմում  
է իբրեւ սկիզբ այն սպանալի պատ-  
ժի որը պիտի թափվի ռուս կոտա-  
վարիչներէ զխիսն :

Հենց ժողովրդի այդ հազարակէպ  
անտարբերութիւնը, նրա ցաւ եւ ու-  
րախութիւնը զգալու ընդունակու-  
թիւնների քաբանալը կազմում են  
բռնութեան ամենածանր դատաւճիթը :

Այնտեղ Պետերրուրդում մայրերը  
արեւնոտ արցունքներով սգում են  
անբնակ վայրերում եւ մոռալ գնդաւե-  
ներում դանված զաւակների շարա-  
բախտութիւնը, այնտեղ չկայ մի բն-  
տանիք որ շարժարված չի լինի բըռ-  
նաւորներից կամ շարունակ չը դո-  
ղայ իր որ եւ է անգամի ապագայի  
վրայ, Պետերրուրդը իր միակ մտա-  
ծումը ունի, ինքնապաշտպանութիւն  
կամայականութեան դէմ :

Մարդկային արեան հոտումը որ  
տեղի ունեցաւ յունվարում, Պետեր-  
րուրդում, նշանաւոր կիրակին, ռուս  
ժողովրդի հոգին բռնաւորների տան-  
ջանքներով, այլեւս ուրիշ վշտի հա-  
մար տեղ չէ մնացել, Ահա թէ ինչի  
Պետերրուրդը խաղաղ է :

Միայն լուրթիւնը չէ դաս թագա-  
ւորների համար, աւել է երբեմն Մի-  
րարուն, աւելի լաւ դաս կարող է լի-  
նել եւ անտարբերութիւնը, որը ցա-  
մաքեցնում է ժողովրդների ուժերը :

բռնաւորներէն եւ անասնութիւնն ից խեղճված երկիրներէ ուր որ մարդկային իրաւունքը եւ արժանապատուութիւնը բթարէն ոտնակոխ են եղած :

Եւ ինչի՞ համար ոուս զինուորը արիւն թափէ , կռուի վայրում , երբ նա տեսնում է որ իր նաւին վտանգ է սպառնում ընդ ընդ խորտակիչ ականներէն , երբ նրա զինի վերելում քչում են հարիւրաւոր մահաբեր սուսերն , ու այդ սպառնական վայրկեանում նրա անհակառակութիւնը ենթարկված է ամենամանր փորձութիւններէ , միթէ այդ զինուորը չէ մտածում թէ իր եղբայրը թողված է սառուցեալ Սիբիրում , ուր արեւի ճառագայթները չեն թափանցում , չար շարանքներով ու տանջանքով լի աշխատանքով , հեռի ընտանիքից , ծնողներէն վերջապէս համար իր կալուստէն իր կեանքը :

Այն մահաբեր վայրկեաններում , երբ մարդկային նեարդերը սարսափից քարանուս են , երբ դժոխային որոտումով նաւի տախտակամածի վերայ պայթում են հրաշէկ սուսերն եւ երբ ամենաքաջ հոգին սարսուռ է յայտնի մահուան անջուր միթէ ոուս զինուորը ինքն իրեն հարց չէ տալիս — թէ ինչի է կուռում . նրա համար որ իր յաղթանակով աջակցէ թշուառութեան աւելի խոր արմատ ձգէ Ռուսիայում , նրա համար որ լրտեսները աւելի շատանան եւ բանտերը լեցնեն , նրա համար որ ամեն յի ազատական թափ բուռնքով խեղճի , եւ ամեն կերպով իրաւազուրկ լինի ոուս քաղաքացին , երբ անհոգի պաշտօնեան յափշտակում է նրա կալածը , արատաւորում պատիւը :

Ռուս զինուորը կուռում է , որովհետեւ ստիպած է , որովհետեւ բնական ինք քաջ է , բայց նրանում պակասում է գիտակցութիւնը : յոյսը կտրված է , նրան պակասում է ազատ ոգի ոգեւորվելու համար , որովհետեւ նա Մ. Արեւելքում չէ կուռում սեփական դատի համար : Ահա թէ ինչի պէտք էր որ Ռուսիան յաղթվէր եւ Պետերբուրգն էլ անտարբեր մնար , եւ թող ներկայ պատերազմի կործանիչ արդիւնքները խրատ լինեն բոլոր բռնապետների համար , որ ժողովուրդները բռնութեամբ չեն կառավարվում եւ իրանց հնացած ձեռնառութիւնները ժողովուրդներին ճնշելու , խաբելու համար , վերջ ի վերջոյ ապար-

զիւն են մնում : Ռուս ժողովուրդի անսարբերութիւնը դէպի անսահման դժբախտութիւնը , ուրիշ բան չէ , եթէ միայն նրա անհայտելի խորին ատելութիւնը դէպի ոուս անբարոյական բռնապետութիւնը :

Այնու ամենայնիւ նոյն այդ բազմաշարքար ու սարսափահար ժողովուրդի ծոցում արգէն ծնվել է ժողովրդային այն ուժը , որը պէտք է կատարէ Ռուսիոյ ներքին կեանքի վերանորոգութիւնը :

### ԺՈՐԵՍ ՀԱՅՐԵՆԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Անհաշտ , տեսական սօցիալիստ Հէրվէի հակահայրենասիրական յայտարարութիւնները մեծ յուզում առաջ բերին թէ Ֆրանսայի հասարակութեան և թէ վերջերս կրկին իրարու միացած ընկերվարական շարքերում , ու ժօրէսին ստիպեցին լացատրութիւններ ժամել այդ յայտարարութիւնների առթիւ , որոնք ինքը՝ «աշակերտական պարատօքսներ» կոչելով գոհացել էր :

Ծրիանօնում տեղի ունեցած մի համախմբումի մէջ , կազմակերպված կլինեանկարի սօցիալիստական յանձնախմբի կողմից , ուր կային մօտ երկու հազար հոգի , ժօրէսը ամբողջ երկու ժամ խօսեց իր դիակլեպտիկայի անհատում միջոցներով յաղթահարեց Հէրվէի թէօրիան , որը անձամբ ելել էր ժօրէսին պատասխանելու համար :

Այս խնդիրը մեծ կարեւորութիւն ունենալով և մեր երիտասարդութեան համար , աւելորդ չենք համարում ժօրէսի բացատրութեան մի քանի կտորները՝ «Տան» լրագրից քաղելով , հազորդել և մեր ընթերցողներին :

«Ես , պէտք է յայտարարեմ որ առհասարակ ծայրայեղ , կեղծ և վտանգաւոր թէօրիաները վա-

խեցնում են միայն ոչ առողջ կուսակցութիւններին : Մի դար առաջ , ուսման վարական և բուրժուական յեղափոխութիւնը պատրաստվեց այն ժամանակի բոլոր հաստատութիւնների կատարի քննադատութեան ենթարկվելով : Եւ շատ բնական է որ այժմ պատրաստվող ընկերվարական յեղափոխութիւնն էլ ստեղծում է ամեն տեսակ քննադատներ ներկայ հաստատութիւնների համար :

Ու եթէ ինքը դատապարտում է Հէրվէի թէօրիաները այդ ոչ նրա համար է որ նրանք դիպչում են ունէ կուռքի — ազատ խելքի համար կուռքի չկան . այլ որովհետեւ «փոխանակ հայրենիքի գաղափարը պարզելու աւելի լուրջ դժարութիւններ և թիւրիմացութիւններ յայտնուեցան վտանգին են ենթարկվում» :

Այդ պատճառով էլ ինքը ճառասուր կը բացատրէ առանց վերախոյնելու ունէ աւանտական հեղինակութիւն և միշտ յենվելով այն ըմբռնումին , որ ընդհանուր են բոլոր սօցիալիստներին , կը յաղթահարէ կրիտիկում վերցնելով՝ ընկերվարական յեղափոխութիւնը : Ու այսպէսով ժօրէս կանցնի խնդրին : Նախապէս սօցիալիզմը իրականանալի համարելով յայտարարում է որ մարդկութիւնը պէտք է ներկայացնէ մի ընդարձակ կօմունա , որի միջից վերացնենք դասակարգային և ցեղային պայքարը : Այդ մարդկութեան մէջ հայրենիքները չը պէտք է ջնջվեն , այլ կը մնան իբր ազգային հանճարների համախմբումներ , և իբր առանձին արհեստանոցներ համաշխարհային աշխատանոցի տարածութեան մէջ : Ընդհանրապէս ըստ ժօրէսի կօմունական մարդկութիւնը

դաշնակցական սխառմի պէտք է վերածվի : Այսօր հայրենիքները «կազմակերպված մարդկութեան կտորները են , որոնք պիտի ծառայեն իրական , մեծ և մեծ մարդկութեան կազմակերպումին , որը գեռ գոյութիւն չունի» :

Իրօք Մարքսը , էնգելսը 1847 թիւին գրել են որ Պրօլետարը հայրենիք չունի , բայց դա մի քմահաճոյք էր այնպիսի ժամանակում երբ աշխատաւոր դասակարգը զրկված էր ամեն մի իրաւունքից : Մինչդեռ ինքը Մարքսը մի քանի տարի առաջ յայտարարել էր որ աշխատաւոր դասակարգի համար շատ փաստակար կը լինի , եթէ նա թշնամի դասակարգին ժաւանգութիւն թողնէ այն փառքը , որ պատկանում է ամեն մի երկրի ճառասուր փայլուն կերպով ընդարձակում է այս կէտը և հասնում Հէրվէի գրած հարցին՝ թէ ինչպէս պէտք է վարվի սօցիալիստը պատերազմի պարագային : Ժօրէսը յայտարարում է որ Հէրվէի թէզան սխալ է , որովհետեւ ուզելով յեղափոխական պրօլետարի համար այդ երկու խնդիրները՝ ազգային եւ միջազգային պարտահանութիւնները հաշուեցնելու ձեւը գտնել , նա խնդիրը որոշում է շատ պարզ կերպով , հայրենիքը դուրս նետելով : Բայց դա լուծում չէ :

— Այո՛ , ձայնից մէկը :

— Ոչ , եռանդով պատասխանում է ժօրէսը , և դրա ապացոյցը այն է որ Հէրվէն ինքը բացառութիւններ ընդունում է , գերմանացի դաւանում է , բայց թուրք կամ ուս ոչ :

— Դա կատակ է — ընդհատում է մէկը , բայց ճառասուր շարունակում է , քանի որ Հէրվէն բացառութիւններ ընդունում է , ժօրէսը պահանջում է որ նա շա-

#### Ա. ԱՄՏԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԵՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

(Գրագիտի յիշողութիւններից , Ամրան արկածներ քաւական սարօրինակ ևս սարակալութեան մեջ)

(Թարգմ. բուսերէնից)

(Շար. ևսխոյ դիւրեմ)

Վիկտորիա Պավլովնան լուռ գլուխը քաշ արած եւ ծնօտը կրծքին յենած երկար նստեց . ես տեսայ թէ ինչպէս նրա ականջները կար մըրում էին , ինչպէս այտուկները ցնցվում , որովհետեւ նա կատաղու-

թեամբ շրթունքները բարկութիւնից կրծում էր :

Վերջապէս նա յանդգորէն , նոյն իսկ մի քիչ էլ բարձրից նայելով ինձ մեծամտութեամբ ասեց .

— Եթէ դուք հիմա ինձնից սպասում էք զգայուն դարձուածքներ , որ ես այդ դէպքից յետոյ զղջացի , յուսահատվեցայ , ամօթից ուզեցի ջուրն ընկնել կամ թէ կախվել , ես ձեր սպասումները ի դերեւ հանած կը լինեմ : Այն միջոցին ես ոչ մի զղջում չունեցայ . իմ կարծիքով զղջումը , ամօթը նրանց յատուկ է , որոնք դեռ անգունդի յատակին չեն հասել , այլ դեռ օդի մէջ պտըտվում են : Բայց երբ երկնքի բարձրութիւնից զարկվում ես գետնին , անկման թափը այնպէս շփոթեցնում է որ ամեն ինքնազգացումից զրկվում ես , ինչպէս եւ զղջալու եւ ամաչելու յատկութիւնից :

Գիտէք դուք թէ ինչ է անբարոյականութեան կատաղութիւնը : Չեմ կարծում . այդ մարդկանց չափազանց

ազատութիւն տրուած է , այդ կատաղութիւնից զերծ մնալու համար : Դա զգայնութեան ըմբոստութիւն է , ուրեմն ամեն ինչ արգիլված է , ամեն ինչ պատերված , բայց նա յանկարծ բոլոր փականքները կտրտելով բանտապահներին եւ կանոնները ծաղրելով դուրս է թռչում դէպի ազատութիւն եւ ապրում անկասօրէն , ինքն իրեն , յիմարութիւններ է աւնում , ինքզինքը ցեխտում մեծ հաճոյք զգում իր կամքի ազատութեան մէջ . ինձ ամեն բան թոյլատրված է . ամեն ինչ իմ անկումս , ոչ արտա , այլ ինքս , ո՛հ ինչ կատարի անբարոյական զգանքի էի վերածվել :

Ու այդպէս , ամենամեծ կատաղութեամբ վեց շաբաթի շուրջ ես անձնատուր եղայ այդ չնչին Աֆանասիին , որը ինքն էլ սկսեց սարսափել , մտածելով թէ գլխին մի փորձանք պիտի բերեմ : Մի օր առաւօտեան արթնելով , ինքս ինձ չը ճանաչեցի . Առողջացել էի : Տարօրինակ զգացում էր :

րունակէ վերլուծողական ոգին հաստատելու համար միապետութեան և հասարակագետութեան «տարբերութիւնը», որը ուսման վարութեան վերջնական ձեւակերպումն է, մի վարչութիւն, որը ջերմօրէն ցանկանում է եւրոպական պրօլետարը ամբողջօրին:

Այդ գործիքը աւելցնում է ժօրէսը, որին Պրօլետարը միայն մատով է դիպել: Թոյլ չենք տայ որ քանդեն ոչ ներքին յետադիմականներին եւ ոչ էլ արտաքին յարձակողներին:

Այս հայրենասիրական յայտարարութիւնը հրճանքով է ընդունվում: Ժօրէսը շարունակում է:

— Մարդկութիւնը գերմանական ազատ հանճարի պէտք ունի, ինչպէս և Թրանսական: Եւ գերմանացի սօցիալիստները ոճիկ կը գործէին մարդկութեան դէմ, եթէ թոյլ տային որ Թրանսան բռնադատուէր Գերմանիայից: Ինչ որ էլ ասենք, քաղաքացի չէրվէ, մենք միանացիներ ենք և միայն տիրապետումը կարող է մեզ գերմանացիներ դարձնել: Եւ մենք ոչ թէ իրական գերմանացիներ կը լինենք, այլ գերմանական ստրուկներ: (ժափահարութիւններ) և տարօրինակ է որ Թրանսայի Պրօլետարին առաջարկվում է ընդունել մի նոր բռնակալութիւն:

Դրանից յետոյ ճառախօսը քննում է չէրվէի ծրագիրը: որը պահեստի զինուորներին է յանձնարարվում: Այդ ծրագրի միտքը այս է. — եթէ մի զօրք հայրենիքը պաշտպանելու չէ ծառայում, հապա էլ ինչի պէտք է գոյութիւն ունենայ: Եթէ չէրվէն հետեւողական է, գործադուր պէտք է այսօրվանից պահանջէ: Տօլստոյի զինուորական

գործադուր միայն զոհեր կունենայ արդիւնք:

Յավիշտակված հակազգայնականի ճառերի մի քանի կէտերն էլ ջախջախելուց յետոյ՝ ժօրէսը իր ճառը այսպէս է վերջացնում:

«Անդադրում գրգռումներով, ազգայնականին միշտ ետ մղելով, երկգիմի բանաձեւերով, չէրվէ, կարող ենք զարգացնել ազգայնականութիւնը, պէտք է որ արգիւնք կառավարութիւններին պատերազմին դիմել: Մեր ամեն ժամուան գործունէութեան մէջ, համաժողովներում պէտք է նախազգուշացնենք կառավարիչներին, որ պրօլետարի խիղճը կըմբռնատանար: ուղղակի սրանով կարող ենք մի պատուհասի առտղը առնել, բայց եթէ նա տեղի ունենայ, մենք թոյլ չենք տայ որ Թրանսան յարձակումից վնասվի:

Մեր ցանկացածը համաշխարային յեղափոխութեան ազգարար նշանն է. որը ոչ մի հայրենիքի չի դիպչի, այլ ընդհակառակը նրանց կը մեծացնէ, կը միացնէ նոր մարդկութեան մէջ հաշտված եղբայրակցօն բարձր աշխատանքի ճշմարտութիւնով:»  
Ձեզ ենք թողնում երեւակայել երկու հազար ժողովականներին ոգեւորութիւնը, որը հաւաքվել էր լսելու մեծ քաղաքացու հայրենասիրական դաւանանքը:

ՋԱՆՋԱՆԻՉ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Մեծ ու զարհուրեցուցիչ եղաւ վերջին լուրը: Առթած հրատարակումը անբացատրելի էր: Հրատարակում ոչ թէ որովհետեւ անակնկալ մըն է այդ հեռագրին ժամանումը, այլ որովհետեւ անպատեհի ու անբեւեակայելի էր ատոր բովանդակութիւնը... ճարտական ու ուսական նաւատորմը կը բաղխուին իրարու փօքէական նեղուցքն մէջ, Յուշիմա, եւ 24 ժամ կոխէ մը վերջ՝ ուսական հրատարակումը:

կայ նաւատորմին հազիւ հազ կը յաջողի ազատիլ 2—3 զրահաւոր, իսկ մնացեալներէն 11ը կընկղմին, 6—8 հատ կը գրաւուին հանգրձա 3000 զերիներով, որոնց մէջ եւ ծովակալներ նէպօկաթով եւ Ծօլքէրչամ... Շարք մը թղթակիցներ կը պնդեն Ռօժտէնսվէսկիի մասին եւս իբրեւ գերեալ, սակայն, կարծիքները անոր նկատմամբ կը տարբերին: — Ուսած կը յայտարարեն թէ երեք տեղերէ վերաւոր՝ կոնակէն, գլուխին և կուրծքէն՝ յաջողած է հանել վախժվօթօք, ուրիշներ կը գնեն գայն գերիներու շարքին մէջ, իսկ երրորդ մաս մը, որոնց գլուխն է Վժայմզ, կը հռչակէ զայն սպանուած, այսինքն իր գլխաւոր զրահաւորին հետ ընկղմած...  
Այս մասին, անշուշտ դեռ որոշ բան մը ըսել վաղաժամ է: Բայց եւ այնպէս, միւս իրողութիւնները կան ու կը մնան...

Ուրեմն այս է եղած այսքան զովուած, փառաբանուած եւ գնահատուած Վալթիկ նաւատորմը, ու իր այնքան դրուատուած եւ բարձրացուած ծովակալը՝ Ռօժտէնսվէսկի... Խեղճ Նիքօլա...

Ճարտական կորուստին համար ի հարկէ մանրամասնութիւնները կը պակսին: Ինչ որ հասած են գրեթէ անհաւատալի կը թուի նոյնիսկ Թօլստոյի ռազմագիտական տաղանդին է՛ն ջերմեռանդ հիւժոյղին — միմիայն 3 թօրփիլօյի կորուստ մը... բայց խնդիրը իր կորուստին վրայ չէ: Թօլստոյ, դեռ պատերազմի առաջին օրէն պարտութեան ստուերին իսկ չը տեսնելով հանդերձ՝ տարաւ այս անգամ յաղթանակ մը, որ մոռցուց մինչեւ անգամ իր Բորթ Արթուրը: Իսկ իր պաշտօնակիցներուն ցամաքի վրայի գիւցազնութիւնները-Լիօնանկ, Յալու եւ... Մուքսէն...

Ինչ ընթացք պիտի բռնէ այսուհետեւ ուս կառավարութիւնը, հիմա որ այլեւս իր վերջին յոյսն ու հոգին ալ ոչնչացաւ: Կոյ յայտահետեւ յաղթութեան ո եւ է ակնկալութիւն: Ինչով պիտի կռուի ճարտական — այս նախախնամական բարեպաշտ պատուհասին դէմ: Ծով, նաւատորմ — ատոնք գոյութիւն չունին այլեւս, եթէ չը հաշուենք չորրորդ նաւատորմը, որ տակաւին ճամբայ իսկ ելած

չէ: Իսկ ցամաք — այդ ալ նոյնքան կասկածելի վիճակի մէջ է: Իրաւ է թէ Մանչուրիական բանակը, Լինէ-վիչի հրամանատարութեան ներքեւ կը բաղկանայ անուսղն կէս միլիօնէ մը, սակայն հարց է թէ ինչ վիճակի մէջ ատի: Ինչ է անոր թարսական, նիւթական եւ զինուորական գրութիւնը: Ատոնք Գորբաթկինի Մուքսէնէն ցիր ու ցան խուսաբած բանակին ճեպրիները չեն... Ապա, այսքան ժամանակամիջոցի մը մէջ կըրցած են կրած անգին չօքէն ըստփութիլ եւ վերակազմուիլ այնպիսի ձեւով մը, որ կուրք տան Օեամայի Օթույի եւ միւսներու տիտան բանակներուն, որոնք մինչեւ այսօր անդու ու անդադար իրենց ուժերը կը բազմապատեն:

Հարցին պատասխանը, ափսոս զարհուրելի է: Ռուս միապետութիւնը դեռ չէ կշտացած կուլ տուած գիտակներով, Մանչուրիայի դաշտերուն և Բորթ Արթուրի պարիսպներուն վրայ ու անկուշտ ալիքներուն ծոցը նետած զոհերը գեռ անբաւական են ցարական սատուրնալիային...

Թող հռչակեն քաղաքակիրթ մամուլի ներկայացուցիչները որքան որ կուզեն, թէ ատի պարսութենէ աւելի՛ նուստացում մըն էր: Պարիզը ո՛չ ամօթ ունի, ո՛չ խիղճ ո՛չ գուրբ եւ ոչ ալ զգացում: Դեռ կը յամառի սխաղագրութեան բանակցութեան առաջնութիւնը ստանձնելու եւ կը յայտարարէ որ՝ երբէք խաղաղութիւն չէ կարող կնքել այսուհետեւ, մանաւանդ ճարտական կառավարութեան առաջադրած պայմաններով...

Ինչ կարելի է ըսել: Արջը իր օրհասական տագնապին մէջն է: Երկու երեք աչքի զարնող տեղեր եւ անձնաւորութիւններ ալ կան, որոնց ևս ձեռքէ հանել, արիւնի մէջ թաթխել հարկաւոր է: — Վախժվօթօքի նաւատորմը՝ արժանանցնելով գայն Բորթ Արթուրի ճակատագրին, իսկ զօրավար Լինէվիչն եւ Գորբաթկին՝ նէպօկաթով եւ Ծօլքէրչամի աստիճանի բաղդին...

Եւրոպական մամուլը գրեթէ ամեն կարգի ու գոյնի ներկայացուցիչ «խաղաղութիւն» կը պօռայ: «Վալթիկթօլ» նի ճարտական հիւպատոսը Ռուզվէլթի հետ երկար տեսակցելով՝ անոր միջամտութեան հաւանութիւնը ընդունած է այդ բարեբար գերին հա

կարծես թէ սրտիս վրայից մի ծանր մտալ բան պոկվելով ընկաւ գլուխը մի կողմ: Բարոյական վերքեր կան, ցաւում են, բայց չարութիւնը հետոյցի է սրտից: Այդ վերքերը կատողանան կանցնեն, եթէ ողջ մնանք կը բժշկենք:

- Խիղճս հարցաքննել սկսեցի:
- Ես անասուն եմ:
- Պատասխանում է:
- Անասուն էիր:
- Յետո՞ւ եմ ես:
- Յետո՞ւ վեցի՞ր որչափ կարող էիր:
- Էլ ինչի՞ ես չեմ տանջվում քո յանդիմանութիւններից, կարծես դու էլ ինձնում գոյութիւն չունես:
- Չը գիտեմ: միայն զգում եմ որ դու կատաղութեանդ գոհացում տըւիր, եւ հիմա էլ դէպի անբարոյականութիւն չես վազի, ու ոչ հոգիդ եւ ոչ էլ մարմինդ կաղտոտես:
- Կանչեցի Արիսային, նա ի հարկէ սկզբից ամեն բան գիտէր եւ ասացի
- Է՛հ, ծծմայր, մինչեւ հիմա չատ յիմարութիւններ արի, այլեւս կը

բաւէ: Հիմա ինձ Աֆանասիչը սպասում է այն ինչ տեղում: գնա եւ յայտնիր որ չըսպասէ: Ասա որ ամեն ինչ վերջացաւ: Էլ ոչ մի տեսակցութիւն չի լինի: Թող լեզուն ամուր պահէ: Եթէ դուրս տայ, ասի՞ր որ իմ ձեռքով կսպանեմ շան նման:

Արիսան ծիծաղեց, նկատելով: — Ուրեմն վազելուց կշտացար: Ու անհա այդ խօսքով կարծես գանկիս զարկեց: այնպէս ինձ համար պարզ եղաւ այս նոր անասնական հանգստութեանս պատճառը, ինչպէս եւ անցած անասնական անբարոյականութեան պատճառը:

Արիսան իմ յանձնարարութիւնս կատարեց ճշրութեամբ եւ ամեն բան այնպէս եղաւ, ինչպէս սպասում էի: Աֆանասիչը այդ առաջարկս ընդունեց ոչ միայն առանց ողբերգութեան այլեւ ուրախութեամբ որ այդպէս ամօթան կերպով ազատվեց, լեռը ուսերիցս ընկաւ:

Վերջերում նա Արիսային խոստովանել է որ յոյս չէ ունեցել այդ ար


կածից ողջ առողջ դուրս գալու: միշտ օր եւ գիշեր դողի մէջ է եղել իր կեանքի մասին, եւ եթէ ես այնչափ գեղեցիկ չը լինէի, կը փախչէր ուր աչքերը կը կտրէին...

Ուրեմն ձեր լրագրական ոճով խօսելով, միջազգայն գոցված էր, ի գոհութիւն ընդհանուրի: Ծուրջս ամէն ինչ զգանք էր պատճառում, թէ մարդիկ թէ տեղերը: Առանց այնան սպասելու գնացի Պետիբորգ: Գնում եմ, եւ ճանապարհին սարսափով մտածում որ գործ չունեմ այնտեղ գնալու: Լուրջ, բովանդակութիւն պարունակող կեանք չէ սպասում այնտեղ ինձ, նոյն անգործ, անմիտ, կեղծ կեանքը, լի կեղծ ազնեական յաւակնութիւններով:

Տեղ հասնելուս պէս, ինքեցիայով, գնացի դասընթացների տեսչի մօտ, կարծես ցոյց տալ ուղեղով որ իմ գործի համար եմ եկել: զանգը դեռ չը քաշած ձեռքս ետ քաշեցի: մտածելով — իրական տաղանդ չունեմ, ուրեմն այստեղ պէտք է պարտաւոր

վեմ արդուգալի աստղ դառնալ, մի խօսքով բեմական քօթօթի վերածվելու: Գեղարեւեստը չեմ պաշտում, միայն լսել եմ որ նրան պէտք է սիրել եւ այսինչ այսինչ ձեւով արտայայտել: Եւ ես էլ ուրիշի, գրքերից վերցրած, բառերով արտայայտում էի: Դասընթացները ինչ են ինձ համար: Այր մարդիկ կուրսներում են իրար հանդիպում, մենք կիներս էլ մեզ համար կիսագեղարեւեստական դասընթացներ ենք հնարել: ու երբ ես երեւակայեցի այդ կուրսը, ուր պէտք է հանդիպեմ որեւէ արի, կիսակոյսի եւ ապահարզան ունեցողների, ձեռքս զանգիցը ետ քաշեցի եւ խաղաղութեամբ վերադարձայ տունս:

(Շարունակելի)



մար : Անգլիական մամուլն ու վեհապետը—աւելցնենք երկուքն ալ առերեսս—կը ճգնին միեւնոյն գործին բայց հետեւանք պիտի ըլլայ—ինչ որ եղած էր մինչեւ այսօր — զո՛ւր ջանք...

Դեռ եւս Բեթերսպուրկ անգամ անգիտակ է կատարուող իրողութիւններուն : Աւելին կայ, ոչ միայն անգիտակ, այլ եւ կը ցնծայ Ռոտտէն-վէնսքի տարած օմեծ յաղթանակով ինչպէս կը հետագրէ Բարիզեան օրաթերթերէն մէկուն մասնաւոր թղթակիրը : Այո՛, ուստի ցէնզորը, տարած է իր ստորնութիւնը այն աստիճան, որ լուսն մնալով հանգերձ ճշմարտութիւններու հակառակ յօրինած է հակամարդ կային սուտեր : Բէ՛ իրենց նաւտորմը ծանր կորուստ մը տալով Թօկոյին — 8 թօրփիլօ՛—զերծ ու ապահով հասած է վլաւիօսթօք... Թէ յաղթական ճակատամարտը ետանդունօրէն կը շարունակուի, Բէ... Թէ... բայց աւելորդ է այդ ստորնութիւններուն շարքը երկարել : ամենուն ծանօթ է...

Իսկ ճշմարտութիւնը երբէք ծածուկ մնալու դատապարտուած չէ : Ուշ թէ կանուխ պիտի գայ դուրս եւ այն ատեն անխուսափելի հետեւանք պիտի յաջորդէ : — Երբքին խոսովութիւններ, ցոյցեր արիւնալի դէպքեր, Սրպիակիներու, Բլէվէներու, Սէրկէյներու, Նակաչիձէներու եւ նման գազաններու վրայ կատարուած արժանավայել արարքներու կրկնումներ : Ու ատոնք ներքին հարուածներն են որ պիտի կրնան փութացնել ըսպասուած, ակնկալուած տենչալի խաղաղութիւնը...

Մ. ՏՈՒԱԿ

Յ. Գ. — Վերջին րոպէին ձեռքս հասած ըլլալով անգլիական օրագիր մը ատկէ կը տեղեկանամ ցաւալի լուր մը, որ հակառակ վերոյիշեալ նիւթէս հետու ըլլալուն՝ կը փութամ հաղորդել : — Ս. Բեթերսպուրկէն հասնող հեռագիր մը կը գուժէ երկրորդ հայկական կոտորած մը Նախընտանի մէջ, ուր սպաննուած են 22 հայեր եւ 2 միւսլիմաններ, իսկ չորս հոգիի ալ այրուած մարմինը գտնուած : Խանութիւնները բոլորովին թալանի մատնուած են, Նոյնին մօտ գիւղ հիմնովին կոտորուած է, մինչ ուրիշ գիւղ մը նոյնպէս բաւական թուով սպաննուելէ վերջը քնակիչները փախած են այլ եւ այլ կողմեր : Տիրող թշուառութիւնը ըստ հեռագրին, զարհուրեցուցիչ է, մանաւանդ որ մարտիներն ալ զժառգութեան լրացուցիչ մասը բերած են իրենց կողմանէ :

ՆՈՅՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Տէ՛ր,

Ներկայ թուականիս մայիս 1էն կազմուած ըլլալով «Բարիզի Հայ Ուսան» Միութիւնն մը, թոյլ տուէք ներկայ գրութեամբ Ձեր հանրօգուտ լրագրի էջերուն միջոցաւ հրատարակելու հայ հեղինակներուն՝ իրենց երկարասիրութիւններով և ուսումնասէր անձնաւորութիւններուն՝ գրական ներատուութիւններով օժանդակել Միութեանս նորահաստ գրադարանին :

Սիրելով յուսալ թէ ոչ մի հայ գրագէտ և գրասէր անտարբեր չի պիտի մնայ Հայ Ուսանող Միութեանս ներկայ կոչին :

Ի դիմաց Բարիզի Հայ Ուս. Միութեան գիւանի Ատենապետ Ատենապետ Հր. Ալեանաք Մատենճեան հասցէ՝ Իւնիօն Տէ Գէթիւսիան Արմենիկէն Եր Բարի Սիւստ ուսխալ 29 ալ Իրիսէն Բարիզ

ՀՐԱԿԵՐ

Պուլկարահայոցս առաջնորդական խնդրոյն նկատմամբ կարծեաց փոխանակութիւն ընելու եւ պորձնական քայլեր առնելու նըպատակաւ, կը հրաւիրուի Վառնայի Հայ հասարակութիւնը վաղը առաւօտ ներկայ գտնուիլ եկեղեցւոյ մէջ. ուր յետ աւարտման ժամերգութեանց ատենախօսութիւններ պիտի ըլլան և ժողովրդի բազմանքը ու կամքը պիտի հարցուի ձեռք առնուելիք միջոցներու մասին :

ԵՐԻՏԱՍՍԱՐԴՆԵՐ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն Մայիս 22ին կը հեռագրեն թէ ժամանակաւոր հաշտութիւնը աչքի առչելու ունենալով Եւ մէնի մէջ կացութիւնը գեւեռ նոյնը կը մնայ :

18 հազար զօրք զրկուած է Մանիս, որը դեռ թուրքերու ձեռքը կը գտնուի :

Նոյն թուականին կը հեռագրեն որ Խտալական զեռպանատան կառավարիչ Մարթինօ Թազի մէջ սպաննուած իտալացու մը համար գոհացում կը պահանջէ :

Այս պատճառով Իտալիա Խօտէտայի մօտերը զօրք հաներ է ուր երկու պատերազմական նաւեր կսպասեն պահանջուած գոհացումը կատարուելուն :

Թ Ո Ւ Ս Ի Ա

Մայիս 23ին Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ՛ համաձայն ստորագրուած ստացուած տեղեկութեան մը ժէնէրալ Թրէպով նշանակուած է ներքին գործոց նախարարի օգնական, պահելով և իր ժէնէրալ նահանգապետի պաշտօնը :

Ներքին գործոց նախարար Պուլիկին երէկ իր հրատարականք տուած է, որ և ընդունուած է :

Պավլովսք տեղի ունենած գոնցերտի մը մէջ խառնակութիւններ տեղի ունեցած են, պատճառը այն է որ հասարակութեան մէկ մասը պահանջած է թաղման

քայլերը անել : Քանի մը հոգի վիրաւորուած են :

«Րուս» թերթը կը հաղորդէ որ Սիպերիոյ երկաթուղիին երկրորդ գիծ շինելու միտքը այս սէզօնի մէջ թողուած է :

Պալատի մէջ Յարի նախագահութեամբ արտակարգ եւ մեծ զինուորական ժողով մը կայացեր է խորհրդակցելու համար թէ պատերազմը շարունակել թէ ո՛չ և շարունակելու պարագային ինչ միջոցներ ձեռք առնել որ յաջողի :

Յարին խոշոր և մանրամասն տեղեկագիր մը յանձնելու վերջին ծովային և ցամաքային պատերազմական անջքերու առթիւ : Յարը յուզուած արտասաններ է «Այժմ և վերջին յոյսը թաղուած է : Ամիրալ Րոտտէնսվէնսքիին Պալթիկեան նաւատորմիցի մեկնումին նախընթաց երեկոյին ըրած նախագուշակութիւնը կառարուեցաւ :

ԹՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Ամիալ Թօգօ այցելութիւն տուած է վիրաւոր Րոտտէնսվէնսքիի Մաղէպօյի հիւանդանոցը, և գոված է ուսններու քաջութիւնը ու յայտարարած է որ ուս քաջ ամիրալը կրնայ շուտով Լեուսիա վերադառնալ :

Ռուս ամիրալը շնորհակալութիւն յայտնած է և գոված ճաբան ծովային զինուորներու քաջութիւնը և հայրենասիրութիւնը :

Միկատօ Թօգօյի արտօնած է պատուաւոր խօսք առնելով Նեբոկաթօլը և ուրիշները ազատարձակել, սակայն անհաւանական կը թուի որ նէպօկաթօլ համաձայնի ազատիլ :

Ճաբոնի ծովային նախարարը ծաղիկներ զրկած է Րոտտէնսվէնսքիին սենեակը զարդարելու համար : զրկելով նաև ուսական քաջութեան մասին հիացումով լինամակ մը :

Ճաբոնական ծովային վարչութիւնը կը շարունակէ պնդել որ ճաբոնացիք միայն երեք թօրփիլանաւ կորսնցուցեր են և մօտ 400 հոգի վիրաւոր և սպաննուած :

Մայիս 23ին Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ ժէնէրալ Կազրէկ Վլաւիօսթօքի բերթին հրամանատարը պաշտպանութեան համար անպէտք եղող քաղաքացիներուն կոչ ըրեր է որ մեկնին քաղաքէն մանաւանդ կիները :

Հօնտօնի թերթերը վստահօրէն կը պնդեն թէ ճաբոնական ընդժողկայ նաւակները մեծ ծառայութիւն մատուցեր են վերջին ճակատամարտի միջոցին :

ՏՈՒՐՔԵՐՈՒ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՊՈՒԿԱՐԻՈՅ

Սօպրանիէի ԺԳ. նստին մէջ ընդունուած այս նոր կանոնագիրը մեծ մասամբ յեղաշրջած է նախորդ օրէնքները : Մեր ազգայինները առհասարակ, մանաւանդ գիւղի խանութպաններն ու արհեստաւորները չեն գիտեր այդ օրէնքները ու միշտ ալ կը վնասուին, տուրք մը երկու անգամ կը վճարեն կամ աւելորդ անընտեսան կը ստանան անոնց պաշտօնեային ապօրինութեան դէմ րոզքելու :

Ուստի այդ կարգի ազգայիններու ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ հայերէնի թարգմանելով հրատարակեցինք այդ կարեւոր օրէնքները : Մեր հրատարակած տետրակը գրպանը ունեցողը ոչ մէկ պաշտօնեայէ չի խաբուիր, կը գիտնայ թէ երբ կամ որ ո՞ւր պիտի վճարէ տուրքը, տուրքը պիտի տայ թէ ոչ եւ որչափ եւն : Ոչինչ գումարի մը հաւար ազահութիւն չընողը տասնեակ ֆրանքներ պիտի շահի ապահովագիտեալ եւ ուրիշներու ալ պատճառ պիտի ըլլայ որ շահին :

Կը հրաւիրենք մեր ազգայինները որ օգտուին առիթին :

Լեզուն շատ պարզ է, եւ կարեւոր տեղերը Պուլկարեզնը կամ տաճկերէնն ալ տպուած է :

Գին 20 սանդիմ փոսթի ծախքով 25 Գրամի փոխարէն 5 սանդիմոց նամակագրօջմ ալ կընդունուի :

Դիմել Օնիկ Բարսեղեանի «Սրեւելեան տպարան» :

Ա Ջ Դ

Աղքատ, Ընկեր, Գործ, Ժողովուրդայ հրապարակաւ յայտարարել թէ Ընկերութեանս ի նպաստ սկսած է գանձանակ մը շրջաբերել հաւաքիչ պ. Հ. Գրիշեանի ձեռամբ. եւ կը խնդրէ որ ամեն անհատ անխորհրէն մասնակցի սոյն բարենպաստ գործին որուն համար կանխաւ մեր շնորհակալքը :

Այս առթիւ նաև կուգայ խնդրել այն արգոյ ազգայիններէն, որոնք ինքնաբերաբար փափաքած են ընկերութեանս ամսական վճարում մը ընել, հաճին ըստ առաջնոյն վճարել հաւաքչին, ստանալով իրենց ընկալարները, որպէս զի Գործ, Ժողովուրդային նպաստել իրեն զիմող աղքատները :

Ի դիմաց Աղքատ, Ընկեր, Ատենապետ Ատենապետ Յ. Ազապար Մ. Գարագաչեան

Շուկայի Պետօ Պուլկարացիս ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Յեղ. Դանակցութեան բարձրագոյն զակ սկեզօզ զինանշանը գաճէ խիստ շքեղ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ, Արձանագործ Պ. Խորէն Փափաղեանէ, որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է :

Կարժէ որ ամեն հայ ուրաշխակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ :

Գինն է 10 ֆրանք կանխիկ, դիմել Շուկայի Պետօ Պուլկարացի ընթերցարանի վարչութեան :